ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 91 – Ա **27 ապրիլի 2018 թ.**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 466-Ա որոշման 4-րդ կետը

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վարդենիսի հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերության գույքը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն հանձնելու նպատակով ստեղծել հանձնող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Պողոսյան Անուշ	- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
Սարգսյան Նելսոն	- մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ
Խաչատրյան Անահիտ	- «Վարդենիսի հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար
Թադևոսյան Ռոբերտ	- «Վարդենիսի հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի տեղակալ
Ասոյան Հարություն	- «Վարդենիսի հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր հաշվապահ

2. Հանձնաժողովին՝ սույն թվականի մայիսի 2-ից 4-ը ապահովել «Վարդենիսի հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերության գույքի հանձնումը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ընդունող հանձնաժողովին և կատարված աշխատանքների մասին տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

3. Սույն կարգադրության հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Արտաշես Նիկոյանին:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ